

ՔՄԱՅՆԱՑՈՒՄԸ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ. ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Քմայնացումը հնչյունների արտասանության այն փոփոխությունն է, երբ լեզվի միջնամասը սովորականից ավելի է բարձրանում դեպի խոշոր քիմքը և հնչյունին տալիս փափկության երանգ: Ավելի ուժեղ քմայնացման հետևանքով պայթական բաղաձայնը կարող է վերածվել հպաշփականի կամ շփականի, կարող է փոխվել ձայնավորի բարձրացման աստիճանը, կամ ձայնավորը կարող է երկբարբառանալ:

Ակզբունքորեն կարող են քմայնանալ բոլոր հնչյունները, բացի միջնալեզվայիններից, որոնք արդեն քմային են:

Թե ձայնավորների, թե բաղաձայնների քմայնացումը կարող է տեղի ունենալ ինքնին (ա>ա, ա>ե, օ>ծ, ու>ս, իւ>ս, ե>յե, ք>քյ, ր>րյ և այլն), կարող է լինել առնմանության հետևանք: Բաղաձայնները սովորաբար քմայնանում են հետևյալ բարձրացման ձայնավորից (ի) կամ քմայնացած ձայնավորներից առաջ: Բայց կարող է և նույն դիրքում ձայնավորի քմայնացումը լինել քմայնացած բաղաձայնի առաջընթաց առնմանության հետևանք:

Որոշ լեզուներում քմայնացած բաղաձայնները կամ ձայնավորները ի հակադրություն համապատասխան չքմայնացած տարբերակների, ունեն հնչույթային արժեք (ռուս. *уголы/угол*, *браты/брат*, անգլ. *cat/cut*, գերմ. *achten/achten*, ֆրանս. *pour/pur*, *utile/ouille*):

Քմայնացումը հայերենում ոչ այնքան բնորոշ, սակայն հաճախակի հանդիպող երևույթ է: Այն հատկապես բազմազան դրսևորումներ ունի բարբառներում (հետնալեզվային պայթականների քմայնացում Ձեթունի, Քեսաքի, Խարբերդի, Տիգրանակերտի, Վանի, Արդվինի, Երևանի, Մեղրիի, Ագուլիսի, Խոյի և այլ բարբառներում, *ռ-ռ* քմայնացում Դրիմի, Դամշենի, Սեբաստիայի, Ալնի, Վանի բարբառներում, ձայնավորների քմայնացում Նիկոմեդիայի, Եվդոկիայի, Տրապիզոնի, Դամշենի, Արաբկիրի, Կիլիկիայի, Սվեդիայի, Տիգրանակերտի, Վանի, Մեղրիի, Ղարաբաղի, Շամախիի, Խոյի, Մարաղայի բարբառներում և այլն): Դրանք հաճախ ունեն հնչույթային արժեք (Վանի բարբառում տուր – *tür*, տալ – *tal* և այլն):

Գրական հայերենին հնչյունների քմայնացումը երբեմն բնորոշ չի եղել (համենայն դեպս վերջին 1500 տարում): Որոշ քմայնացած հնչյուններ երբեմն հանդես են եկել որպես դիրքային չկանոնարկված տարբերակներ, ուստի և չեն էլ արձանագրվել:

Արդի գրական արևմտահայերենում երբեմն փորձ է արվել միայն օտար անուններում քմայնացած ս-ն արտահայտել *խ* տառակապակցությամբ (*Հիւզդոյ*, *Պիւթագորաս*, *Բիւզանդիոն* և այլն):

Արդի գրական արևելահայերենում վերջին դարում որոշ տարածում են գտել քմայնացած *լ-ն* և առաջնալեզվային պայթականները որպես օտարաբան, ոչ կանոնական դիրքային երևույթ:

Քմայնացման երևույթը հայերենում բավարար խորությամբ ուսումնասիրված չէ: Բարբառներում դրա առաջացման տարբեր վարկածներ կան: Դր-

Աճառյանը ծայնավորների քմայնացումը բացատրում է նախորդող քմայնացած պայթակաճների ազդեցությամբ¹:

Գ. Ջահուկյանը քմայնացումը բացատրում է ենթաշերտային ազդեցությամբ: Նա գտնում է, որ ծայնավորների և բաղաձայնների քմայնացումը փոխադրյալնալորված է, և «տարածամանակյա հնչությանբանության խնդիրն է պարզել այն հարցը, թե այս կամ այն դեպքում որն է առաջնային բաղաձայնների, թե ծայնավորների քմայնացումը»²:

Ա. Հանեյանը ենթադրում է, որ առաջնայինը ծայնեղ և կիսաշփական բաղաձայնների քմայնացումն է վերջինս բացատրելով հնդեվրոպական նախալեզվի կոկորդային և քմակոկորդային ծայնեղ հալականների հետագա զարգացումներով³: Այդ բաղաձայններից հետո ծայնավորների փոխազդեցական քմայնացումը հետագայում ընդհանրացել է երկրորդաբար առաջ բերելով այլ բաղաձայնների քմայնացում:

Քմայնացման երևույթն ավելի քիչ է ուսումնասիրված գրական լեզվում: Դրա մասին նկատառումներ ունեն է. Աղայանը, Թ. Ղարազյուլյանը, Հ. Պետրոսյանը և այլք⁴:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում միայն որոշ փոխառյալ բառերում է հանդիպում *լ* հնչյունի քմայնացումը բաղաձայնից առաջ (վալս, մուլտ, Աղոլֆ, Ռուդոլֆ, Վոլֆգանգ, կուլտուրա, ալբոմ, ալտ, ֆալշ, բազալտ, պոլկա, ասֆալտ, կոնսուլտացիա, բուլշիկ, Բալմոնտ, կոբալտ, բալզամ, պալտո, Օլգա և այլն): Սա զուտ ռուսերենի ազդեցություն է, քանի որ այդ բառերի մեծ մասը բնիկ լեզուներում (ֆրանսերեն, անգլերեն և այլն) արտասանվում է առանց *լ*-ի քմայնացման: 20-րդ դարի 20-40-ական թվականներին այդպիսի բառերի *լ*-ի վրա նույնիսկ ապաքարց էր դրվում (ռուսերենի *б*-ի փոխարեն) քմայնացումը նշելու համար (վալս, ալբոմ, կուլտուրա), կամ *լ*-ից առաջ *յ* էր գրվում (բալլշնիկ, ֆալշ, վալշ, բալզամ, Օլգա, պալտո, կուլտուրա և այլն): Օտար բառերի գրության այս ձևերը ժամանակին մերժվել են տերմինաբանական կոմիտեի կողմից⁵: Գր. Ղափանցյանն առաջարկել է նույնիսկ կանոնարկել այսպիսի բառերում *լ*-ի քմայնացած արտասանությունը⁶: Սակայն ժամանակի ընթացքում այդ բառերի մի մասը զրեթե դուրս մղվեց հայերենից (պալտո, բալզամ, կուլտուրա, կոնսուլտացիա, ֆալշ և այլն): Մի այլ մասը սկսեց արտասանվել առավելապես առանց *լ*-ի քմայնացման (ֆակուլտետ, ալմանախ, գոլֆ, ռեյս, ֆիլմ, էմուսիա, Ստոկիոլմ, Կիլոն, էլգա, Սիլվա, Կիլոյուս, Նելսոն, Օսվալդ, Սկերետ, սոլֆեջիո, Ռելս և այլն), քանի որ հայերենի վրա ուժեղացավ եվրոպական լեզուների ուղղակի ազդեցությունը ի հակակշիռ ռուսերենի: Այս երևույթը բուն հայերենի վրա չի տարածվում և ունի մարելու միտում:

Այլ բաղաձայններ ևս առաջին շարքի ծայնավորներից (*ի*, *ե*) կամ *յ* քմային հնչյունից առաջ կարող են քմայնանալ, սակայն անճշան դիրքային տարբերակից ավելին չեն դառնում և որակական ազդեցություն չեն բողոնում հայերեն խոսքի վրա: Միայն առաջնալեզվային *դ*, *տ*, *թ* պայթականներն են, որ նշված դիրքում կարող են ոչ միայն քմայնանալով փափկել, այլև փոխել իրենց հնչյունական որակը հաճախ վերածվելով *ծ*, *ծ*, *ց* կիսաշփականների: Սիա թե ինչու հատկապես սրանք ենք ենթարկել հատուկ քննության:

Դ, *տ*, *թ* առաջնալեզվային պայթական բաղաձայնների քմայնացման երկու դրսևորում կա: Անկը առաջին շարքի *ի*, *ե* ծայնավորներից առաջ, հանդիպում է միայն ռուսերենից կամ ռուսերենի միջոցով փոխառյալ բառերում (դիրեկտոր, դիպլոմ, ինստիտուտ, կոնկրետ, դիկտատուրա, դիապազոն, դիագրամ, դիետա, արտիստ, դինաստիա, դիսերտացիա, դիվերսիա, դիլեմա, դիվիզիա,

դինամո, մեթոդիկա, մեխոդիկա, նիկոտին, կարանտին, Վադիմիր, Դերժավին, էսթետիկա, կարդինալ, դեմոկրատիա, տեխնիկա, մատերիալ, տերիտորիա, տելեֆիզոր, տեքստ(իլ), դետալ, ակադեմիա, մետեորիտ, իմունիտետ և այլն): Այն օտար ներթափանցում է, համակարգային բնույթ չունի և մերժվում է ուղղախոսական կանոններով: Հայերեն բառերի վրա այս երևույթը սովորաբար չի տարածվում: Հիմնականում ռուսախոսների հայերեն խոսքում երբեմն հանդիպում են առանձին հայերեն բառեր այդպիսի քմայնացմամբ (*Տիգրան, Ավետիք, Դիլիջան, մատիտ, պիտի* և այլն):

Դ, տ, թ—ի քմայնացման մյուս դիրքը *յ* կիսաձայնից առաջ է, այդ թվում այնպիսի բարձրացող երկինյուններից (*իա, եա, իո, իու, իե*) առաջ, որոնց առաջին բաղադրիչը *ի*—ն կամ *ե*—ն, հնչում է որպես *յ*: Այդ դիրքում **դ, տ, թ**—ն քմայնանում են ոչ միայն ռուսերենից և ռուսերենի միջոցով փոխառյալ բառերում (*ռադիո, էտյուդ, Արտյոմ, Դիանա, տյուբիկ, ստադիա, ստադիոն, ստուդիա, իդիոմ, կոմեդիա, իդեալ, Շվեդիա, պարտիա, տելեպատիա, բորոյուր, դյուժին, կոստյում, Ստյոպարտ, Դյումա, դյուշես, Վոլոդյա, Նադյա, Կատյա, Տատյանա, կատյուշա* և այլն), այլև ուրիշ լեզուներից փոխառյալ և բնիկ հայերեն բառերում (*դաստիարակել, Նալբանդյան, գորոյան, տիար, արդիական, դյուրին, ծնեդյան, առավոտյան, հավիտյան, պատյան, մատյան, ատյան, արդյունք, բորոյք, թյուր, գիտություն, Դավթյան, բորյա, ըստ երևույթին, տիեզերք, Ավետյան* և այլն): Այսպիսի արտասանության առաջացման ու տարածմանը նպաստել են մի քանի գործոններ

ա. Հնչյունական դիրքը: Սա երևույթի առաջացման նախապայմանն է: **Յ** կիսաձայնը գրական հայերենում ամենից քմային հնչյունն է, ուստի պատահական չէ, որ նրանից առաջ եղած բաղաձայնները հակված են փափկանալու, քմայնանալու: Թերևս պատահական չէ նաև, որ դասական ուղղագրությամբ բաղաձայններից առաջ *յ* չի գրվում, եթե անգամ արտասանվում է: **Յ** հնչյունով կազմված բոլոր բարձրացող երկինյունները դասական ուղղագրությամբ գրվում են որպես երկբարբառներ (*եո, եա, իւ* և այլն): Այդպիսի գրությունը թույլ չէր տալիս *յ*—ի ընդգծված արտասանություն և ազդեցություն նախորդ բաղաձայնի վրա: Սա դասական ուղղագրության պաշտպանական հատկություններից էր, որը վերացվեց 1922 թ. բարեփոխմամբ:

բ. Ռուսերենի ազդեցությունը: Ռուսերենից փոխառյալ բազմաթիվ բառեր հայերեն խոսքում հաճախակի հնչելով ռուսական քմայնացած արտասանությամբ համաբանության օրենքով ազդել են նաև հայերեն նմանօրինակ բառերի վրա պատճառ դառնալով, որ հատկապես ռուսախոսների հայերեն խոսքում քմայնացման այդ երևույթը տարածվի նաև հայերեն բառերի վրա: Իհարկե, որոշ բառերի քմայնացումը մեծ տարածում չունի (*տիար, արդիական, դյուրին, արդյունք, թյուր, բորյա, ըստ երևույթին, տիեզերք* և այլն), և ընդհանրապես երևույթը մերժվում է ուղղախոսական կանոններով: Միայն **—ություն** ածանցի մեջ **թ**—ի քմային արտասանությունն է, որ կանոնարկման որոշ փորձերի է ենթարկվել⁶:

գ. Նոր ուղղագրությունը: Աբեղյանական ուղղագրական բարեփոխումը հայաստանում կատարվում էր ռուսական կայսերապաշտական քաղաքականության և ռուսերենի ծավալապաշտական ուժեղ ճնշման պայմաններում: Ռուսերենի *я, е (յո), ю* տառերը, *е*—ի երկբարբառային արտասանությունը (*յե*), *ю*—ի քմային արտասանությունը կարծես չափանիշ էին դարձել զանգվածաբար ռուսերեն սովորող հայ մտավորականների համար: Թուլացել էին թե ազգի, թե լեզվի ինքնապաշտպանական բնազդները: Եվ կարծես արևելահայերենի ռու-

ստերեոց կրած ազդեցությունը ամրագրելու մոլուցք էր առաջացել 20-րդ դարասկզբին: Մ. Աբեղյանը «Հայերենի երկբարբառները» աշխատության մեջ գրում է. «Եթե ուզենանք, որ մեր այբբենարանը... պակասավոր չլինի, պետք է... y ծայնավորի և io երկբարբառի համար երկտառ *ու*-ի և *իւ*-ի փոխանակ երկու նոր մի տառով նշանագիր ընդունենք»⁹: Ստ. Մալխասյանը ավելի առաջ գնալով առաջարկում էր *իւ*, *եա*, *եո* երկհնչյունների համար ստեղծել հատուկ տառեր, ինչպես ռուսերենի *ю*, *я*, *е* (յո)–ն:

Հատուկ տառեր չստեղծվեցին, բայց խնդիր դրվեց այդ երկհնչյունների գրությունն ու արտասանությունը հնարավորին չափ համապատասխանեցնելու, նմանեցնելու ռուսերենի նույնատիպ երկհնչյուններին: Աբեղյանը առաջարկում էր այդ երկհնչյունները գրել *յու*, *յա*, *յո* տառակապակցություններով (բառասկզբի *ե*-ն էլ *յե*-ով): Այդ առաջարկը մտավ 1922 թ. ուղղագրական բարեփոխման ծրագրի մեջ:

Դեռ Մ. Զամյանը 18-րդ դարում իր քերականության մեջ *իւ* երկբարբառի հնչյունը բացատրելու համար դիմացը դնում է *եու*: Նույնը և Հայկազյան լեզվի մեծ բառգրքի մեջ «*իւ* այսինքն *եու*»¹⁰:

Մ. Աբեղյանը 1890 թվականին *իւ* տառակապակցության ժամանակակից հնչյունն է համարում *իու* սուղ (կարճ) *ի*-ով. «*իւ* = *ի* + *ու* = *յւ* = *յու*»¹¹:

Ավելի ուշ 1924թ., նա, առարկելով Ստ. Մալխասյանցին, *իւ* տառակապակցության հնչյունը չի նույնացնում ռուսերենի *ю*-ին¹² և նույնիսկ հանդիմանում է Մալխասյանցին, որ *իւ* = *յու*, *եա* = *յա*, *եո* = *յո* նույնացումով հայերենի մեջ փափկացրած կամ քմայնացրած բաղաձայններ է տեսնում¹³:

Այնուամենայնիվ, հակառակ Աբեղյանի վերջին պնդումների, նոր ուղղագրության *յա*, *յո*, *յու*–ն զուգորդվեցին ռուսերենի *я*, *е* (յո), *ю*–ի հետ և ձեռք բերեցին քմայնացնող նույնպիսի հատկություն: Գրային պատկերները սկսեցին ազդել արտասանական պատկերների վրա, և կարճ (սուղ) *ի* հնչյունը դարձավ քմային *յ*, որը սկսեց քմայնացնել իրեն նախորդող բաղաձայնները:

իւ, *եւ*, *եա*, *եո* երկբարբառների զարգացումները հայերենում ընթացել են մի քանի ուղղություններով: Դրանք բարբառներում դարձել են կամ բաղադրիչ պարզ ծայնավորներից որևէ մեկը (*իւ*>*ի/ու*, *եւ*>*ի/ե/ու*, *եա*>*ի/ե/ա*, *եո*>*ի/ե/ո*), կամ դրանց միջինը հաճախ քմայնացած ծայնավորի տեսքով (*իւ*>*ն*, *նա*և *եա*>*ա*, *եո*>*ո*): **-ուքյուն** ածանցի օրինակով *սրբութիւն/սրբութեն* բառը դարձել է *սրբութին*, *սրբութեն*, *սրբութուն* կամ *սրբութն*: Այս վերջին ձևում ս–ին նախորդող բաղաձայնը չի քմայնանում: Դրան հակառակ որոշ բարբառներում (պարսկահայ խոսվածքներ, Ախալքալաքի բարբառ) *իւ*–ին նախորդող *թ*–ն քմայնանում է անկախ հաջորդող ծայնավորի որակից (*սրբուչուն*, որտեղ *չ*–ով նշանակված հնչյունը *թ*–ի և *չ*–ի միջինն է):

-ուքյուն (*ի*–*ե*, **-alioŋ*) ածանցի համապատասխանությունն այլ լեզուներում ևս քմայնացման նշաններ ունի: Ֆրանսերենում, օրինակ, դարձել է [ասի–ոն], անգլերենում [էյշն], ռուսերենում [ացիյա]:

Այսպիսով արևելահայ գրական լեզվում վերոհիշյալ երկհնչյուններից առաջ առաջնալեզվային պայթականների քմայնացումը և գրեթե վերածումը կիսաշփականների ունի իր նախադրյալները (հնչյունական դիրք և քմայնացում բարբառներում ու այլ լեզուներում): Այդ քմայնացմանը նպաստող գործոն է ուղղագրական փոփոխությունը: Իսկ նախադրյալի իրացման ազդակը եղավ ռուսերենի ուժեղ ազդեցությունն արևելահայերենի վրա:

Ե. Աղայանը **-ուքյուն** ածանցում **թ>ց** հնչյունափոխությունը փորձում է բացատրել առանց ռուսերենի ազդեցության¹⁴: Բայց պետք չէ այդ մի դեպքը

կտրել վերոհիշյալ համանման դեպքերից, որոնք չեն կարող բացատրվել առանց արտաքին ազդեցության՝ նիշտ է, ռուսերենը չունի **թ** հնչյուն, բայց **խ-ից** առաջ **տ-ի** և **դ-ի** քմայնացումը համաբանությամբ առաջ է բերում նաև դրանց լծորդ **թ-ի** քմայնացում (հավցյան, արցյունք, արցյոք և այլն):

Այլ լեզվական միջավայրերում ապրող հայերի խոսքում (սփյուռքահայեր) բաղաձայնների քմայնացման այս երևույթը չկա նույնիսկ այն դեպքում, երբ **խ** երկբարբառը վերածվել է ս քմային ձայնավորի:

Մյուս կողմից նախախորհրդային շրջանում Արևելյան Հայաստանում ոչ պակաս ուժեղ էր ռուսերենի ազդեցությունը, սակայն քմայնացման երևույթը չէր նկատվում, քանի դեռ չէր կատարվել ուղղագրական փոփոխությունը:

Հետագայում Հայաստանում իրականացված լեզվաքաղաքականությունը փորձում էր դիմադրել քմայնացման երևույթին այն համարելով ոչ կանոնական, մեթծելի: Դրա շնորհիվ ձայնասփյուռի և հեռատեսիլի հաղորդավարները, մանկավարժները սովորել էին խոսել առանց քմայնացման, և 80-ական թվականներին արդեն արձանագրվել է «քմայնացված արտասանության թուլացում»¹⁵:

Ներկայումս պայքարը քմայնացման դեմ մասամբ նվազել է: Բայց նաև նվազել է ռուսերենի ազդեցությունը: Ուստի սպասելի է, որ քմայնացման երևույթը գրական հայերենում չի ամրապնդվի և աստիճանաբար կթուլանա: Թեև այժմ ձայնասփյուռով կամ հեռատեսիլով կարելի է լսել անգլերենի հնչերանգով հայերեն խոսք ռուսերենի շեշտադրությամբ և քմայնացված բաղաձայններով:

Քմայնացման այս երևույթի պատմությունը վկայում է, թե գրական լեզվի համար որքան կարևոր է լեզվաքաղաքականությունը, և պաշտպանական ինչ դեր կարող է ունենալ ուղղագրական համակարգը: Արատավոր լեզվաքաղաքականության դեպքում, երբ ջարդվում է այդ համակարգը, լեզուն կարող է ենթարկվել չկանխատեսված փոփոխությունների և օտար ազդեցությունների: Այս իմաստով խելամիտ է տերմինաբանական կոմիտեի 1957 թ. ընդունած այն որոշումը, որի համաձայն ռուսերենի բաժանիչ փափուկ նշանը (**ь**) փոխառյալ մի շարք բառերում նշվում է **ի** տառով (**ֆելիստոն, օելիեֆ, պրեմիերա, ինտերիեր, Պոլիոժին** և այլն), այլ ոչ թե **յ**-ով¹⁶:

ՕՍՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Գր. Սճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա, Լոբ-Լախիջևան, 1911:

² Ս. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 50, 265

³ Մ. Դանելյան, Ձայնեղ հպականների շնչեղության և քմայնության նախնական աղբյուրի շուրջը, Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր, հ. 1, Ե., էջ 119-125

⁴ Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, Թ. Ղարազուլյան, Ժամանակակից հայերենի ուղղագրությունը, Ե., 1974, Գ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987

⁵ Տերմինաբանական ուղեցույց, Ե., 1964, էջ 22:

⁶ Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 612:

⁷ Ռուսերենում պ—ք քմայնացնող հատկություն ունի, քանի որ ինքնին երկբարբառացած—քմայնացած է, հնչում է որպես [կ]:

⁸ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 121, Թ. Ղարազուլյան, նշվ. աշխ., էջ 218:

⁹ Մ. Աբեղյան, երկեր, հ. Ը., Ե., 1985, էջ 318

¹⁰ Նույն տեղում, էջ 393

¹¹ Նույն տեղում, էջ 298

¹² Նույն տեղում, էջ 417

¹³ Նույն տեղում, էջ 423

¹⁴ Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 275, 280

- Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, հ. 2, Ե., 1987, էջ 21
 Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 1988, էջ 258

Օ. Закарян

ПАЛАТАЛИЗАЦИЯ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ: ПРИЧИНЫ И СЛЕДСТВИЯ

Палатализация не типичное, но довольно часто встречающееся явление для армянского языка. Оно имеет особенно разнообразные проявления в диалектах.

В современном восточном литературном армянском существенны лишь две проявления палатализации согласных Պ, ք, ց. Первое — перед гласными ի, ե — встречается лишь в словах, заимствованных через русский язык (դիրեկտոր, դիպլոմ, ինստիտուտ, տեխնիկա, մատերիալ, տերիտորիա и т.п.). Это следствие интерференции и не имеет системного характера. Второе — перед полугласным յ — встречается не только в словах, заимствованных через русский (նաղիկ, էսյուդ, Աստյոմ, Դիանա, Կատյա, տյուփիկ и т.п.), но и в словах, заимствованных из других языков, а также в исконных армянских словах (դաստիարակել, տիար, արդիական, դյուրին, Նալբանդյան, ծննդյան, մատյան, արդյոք, քյուր, գիտություն, Դավթյան, բրդյա, ըստ երևույթին и т.п.). Это явление в основном отклоняется орфоэпическими правилами. Только в случае суффикса -ություն сделаны попытки нормализовать палатализованное произношение.

В статье палатализация согласных в литературном армянском объясняется как звуковыми позициями, так и внешними воздействиями. Впервые делается попытка найти связь между явлением палатализации и орфографической системой. Палатализация в литературном языке объясняется также политикой языкового строительства.

Н. Zakarian

PALATALIZATION IN MODERN ARMENIAN. CAUSES AND CONSEQUENCES.

Palatalization is not a peculiar but a frequently met phenomenon in the Armenian language. It has various expressions, especially in dialects.

In modern literary Eastern Armenian there are two expressions of palatalization of the consonants դ, ք, ց. The first one - before the vowels ի, ե - is only met in the words borrowed from or through the Russian language (դիրեկտոր, դիպլոմ, ինստիտուտ, տեխնիկա, մատերիալ, տերիտորիա, etc.). It is a foreign interference, it does not bear a system origin and is denied by orthoepical rules. The second one - before the semi-vowel յ (before rising diphthongs) - is met not only in the above mentioned kind of words (նաղիկ, էսյուդ, Աստյոմ, Դիանա, Կատյա, տյուփիկ) but also in words borrowed from other languages and originally Armenian words as well (դաստիարակել, տիար, արդիական, դյուրին, Նալբանդյան, ծննդյան, մատյան, արդյոք, քյուր, գիտություն, Դավթյան, բրդյա, ըստ երևույթին etc.). It is mostly denied by orthoepical rules. Only in the case of the suffix ություն some attempts of standardization have been made.

In the report the palatalization phenomenon of consonants in the literary Eastern Armenian language is explained thoroughly both by the sound position and by the outer influence. For the first time an attempt has been made to find a connection between the palatalization phenomenon and the orthographical system. In the literary language the palatalization phenomenon is also explained by the language building policy.